



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
562	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի N 354 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 456-Ն որոշումը	3
563	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 460-Ն որոշումը	5
564	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 461-Ն որոշումը	6
565	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 462-Ն որոշումը	7
566	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 463-Ն որոշումը	8
567	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 464-Ն որոշումը	9
568	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 465-Ն որոշումը	10
569	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 466-Ն որոշումը	11
570	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 467-Ն որոշումը	12
571	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 468-Ն որոշումը	13
572	«Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու, անցկացնելու և ընտրության նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ԱՀ կառավարության N 469-Ն որոշումը.	14
573	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 476-Ն որոշումը	16
574	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու	17

	մասին» ԱՀ կառավարության N 484-Ն որոշումը	
575	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 485-Ն որոշումը	19
576	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 16-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 486-Ն որոշումը	21
577	««Լիցենզավորման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի N 128 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 495-Ն որոշումը	23
578	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի N 269 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 496-Ն որոշումը	28
579	«Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 497-Ն որոշումը	97
580	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 15-ի N 510-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 498-Ն որոշումը	31
581	«Հաշմանդամության վերափորձաքննության ժամկետների երկարաձգման մասին» ԱՀ կառավարության N 527-Ն որոշումը	32
582	«Ռազմական դրության ժամանակահատվածում աշխատողների վարձատրության գործընթացի կանոնակարգման մասին» ԱՀ կառավարության N 553-Ն որոշումը	33
583	«Արցախի Հանրապետության կողմից արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 568-Ն որոշումը	35
584	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանմանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ԱՀ կառավարության N 586-Ն որոշումը	40
585	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 26-ի N 553-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 622-Ն որոշումը	42

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 456-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 354 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը հաստատելու մասին» N 354 որոշմամբ հաստատված ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ  
ՇԱՐՔԸ ԴԱՍԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ**

1. Արցախի Հանրապետության պետական նախարար
2. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարար
3. Արցախի Հանրապետության առողջապահության նախարար
4. Արցախի Հանրապետության արդարադատության նախարար
5. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար
6. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
7. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
8. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարար
9. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար
10. Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարար
11. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար
12. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարար
13. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
14. Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն
15. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն
16. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահ
17. Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ
18. Արցախի Հանրապետության Հայաստանի և սփյուռքի հետ ինտեգրման կոմիտեի նախագահ
19. Արցախի Հանրապետության ոստիկանության պետ
20. Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ
21. Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պետ
22. Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար
23. Արցախի Հանրապետության գլխավոր դատախազ
24. Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահ
25. Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ
26. Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության նախագահ
27. Ստեփանակերտի քաղաքապետ
28. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներ»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 460-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 378 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Դաշուշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,17 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 461-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,12 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քռասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 462-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1123 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 463-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 181 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Մարտունու քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 1,74 հեկտար, 12,0 հեկտար, 5,3 հեկտար, 2,6 հեկտար, 2,32 հեկտար և 5,2 հեկտար թփուտները՝ փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 464-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 181 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Մարտունու քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 1,56 հեկտար այլ հողերը փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 465-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 155 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Հաղրութի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,06 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 466-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 145 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Բանաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 18,47 հեկտար, 1,84 հեկտար, 2,6629 հեկտար, 9,9 հեկտար, 2,3922 հեկտար, 2,9667 հեկտար թփուտները փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահողերի և 0,62 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 467-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 148 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Մարիամաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,69 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 468-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 186 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշիի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,5 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2020թ.

N 469-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԵՐԶԱՆԻ ԵՎ ՂԱԶԱՆՉԻ  
ՀԱՄԱՑՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱՃԱՄԿԵՏ  
ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՑՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ  
ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, 140-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի համայնքի ղեկավար Թեյմուր Վերդիի Առուստամյանի լիազորությունները:

2. 2020 թվականի հոկտեմբերի 25-ին Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Ղազանչի համայնքում նշանակել համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշման 2-րդ կետում նշված համայնքում արտահերթ ընտրության նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին հատկացնել 280 150 (երկու հարյուր ութսուն հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ  
ՆՈՐ ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ  
ԾԱԽՄԵՐԻ՝ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ  
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ**

<u>Հոդ- ված</u>	<u>Արցախի Հանրապետության կենտրոնական ղևտրական հանձնաժողով</u>	<u>Գու- մարը</u>
		<b>(ՀՀ դրամ)</b>
4115	Աշխատավարձի ֆոնդ (փոխհատուցում) այդ թվում ՏեղՀՀ նախագահի 1 մարդ x 1 ամիս x 54 400 դրամ = 54 400 դրամ ՏեղՀՀ նախագահի տեղակալ և քարտուղար 2 մարդ x 1 ամիս x 34 000 դրամ = 68 000 դրամ ՏեղՀՀ անդամներ 5 մարդ x 1ամիս x 1տեղ x 20 400 դրամ = 102 000 դրամ	<b>224 400</b>  54 400  68 000  102 000
4214	<b><u>Կապի ծառայություններ</u></b>	<b>1 000</b>
	ՏեղՀՀ – 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ	1 000
4234	<b><u>Տեղեկատվական ծառայություններ</u></b>	<b>22 250</b>
	Այդ թվում՝ արձանագրությունների ձևեր 1 տեղ x 50 հատ x 20 դրամ x 1 տեղ = 1 000 դրամ քվեաթերթիկների տպագրություն հ/դ 125 հատ x 18 դրամ = 2 250 դրամ քվեարկության կարգը (պլակատ) 1 հատ x 800 դրամ = 800 դրամ վկայականների ձևեր 1 տեղ x 20 հատ x 150 դրամ = 3 000 դրամ ուղեցույց 1 հատ x 1 200 դրամ = 1 200 դրամ գրանցամատյան 1 հատ x 1 500 դրամ = 1 500 դրամ պաստառ 1 հատ x 5մ x 2 500 դրամ = 12 500 դրամ	1 000  2 250  800  3 000  1 200  1 500  12 500
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ Գրասենյակային նյութեր 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ	<b>1 000</b>  1 000
4264	Տրանսպորտային նյութեր Բենզին 90լիտր x 350 դրամ =31 500 դրամ	<b>31 500</b>  31 500
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>280 150</b>

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 սեպտեմբերի 2020թ.

N 476-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 1-ին կետի «550», «473» և «77» թվերը փոխարինել «567», «487» և «80» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատումեմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 817-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, միաժամանակ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնելու համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ձևը, տրանսպորտային միջոցի պետական հաշվառման ազգային վկայագրի ձևը և նկարագիրը, տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի ձևը և նկարագիրը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի ձևը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը, Արցախի Հանրապետության Նախագահի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Արցախի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության անդամների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, օրենքով ստեղծված պետական մարմինների ղեկավարների, Ստեփանակերտի քաղաքապետի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների ծառայողական տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի N897-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 817-Ն որոշման N 12 հավելվածի աղյուսակի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.	Արցախի Հանրապետության կառավարության անդամներ, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարներ, օրենքով ստեղծված պետական մարմինների ղեկավարներ, Արցախի Հանրապետության շրջվարչակազմերի ղեկավարներ և Ստեփանակերտի քաղաքապետ	001OS90 033LL90 049LL90 099LL90 100OO90 004CC90–040CC90 999CC90
----	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

23 սեպտեմբերի 2020թ.

N 485-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 17-ի «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 227 որոշման 1-ին կետի «դ» ենթակետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 26-ի «Օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» N 519 որոշման տեքստում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի «Լիազոր պետական մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի N 904 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 823-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին» բառերով.

2) որոշման 1-ին կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեին» բառերով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 18-ի «Ջրային հարաբերությունների կարգավորման բնագավառում կառավարման լիազոր մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 571 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 479-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեին» բառերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

փորձաքննություն իրականացնող լիազորված պետական մարմնի մասին» N 735 որոշման 1-ին կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեին» բառերով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» N 736 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելվածի 3-րդ կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե)» բառերով.

2) հավելվածի 4-րդ կետում, 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում և 11-րդ կետում «նախարարություն» բառը դրա համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կոմիտե» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

3) հավելվածի 7-րդ և 10-րդ կետերում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահը» բառերով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 սեպտեմբերի 2020թ.

N 486-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 16-ի «Ջրի ազգային խորհրդի կանոնակարգը և կազմը հաստատելու մասին» N 575-Ն որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2020 թվականի սեպտեմբերի 23-ի N 486-Ն որոշման

«Հավելված N2  
Արցախի Հանրապետության կառավարության  
2019 թվականի հուլիսի 16-ի N 575-Ն որոշման

**Կ Ա Ձ Մ**  
**ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ**

- Արցախի Հանրապետության պետական նախարար (խորհրդի նախագահ)
- Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար
- Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
- Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարար
- Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
- Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
- Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահ
- Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ
- Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ
- Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն
- Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ
- Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահի խորհրդական
- Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ
- Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի ջրային, կենսաթեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ
- «ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
- «ՋՐԱՄԱՍԱԿԱՐԱՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2020թ.

N 495-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 25-Ի N 128 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 17-րդ և 43-րդ հոդվածները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է .**

1. Սահմանել, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակով (այսուհետ՝ աղյուսակ) նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը լիցենզավորող Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմիններ (այսուհետ՝ լիցենզավորող մարմիններ) են հանդիսանում համապատասխանաբար՝

1) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ աղյուսակի 3-րդ բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով.

2) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը՝ աղյուսակի 7-րդ բաժնի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով.

3) Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը՝ աղյուսակի 10<sup>1</sup>-ին բաժնի 1-ին, 15-րդ բաժնի 3-րդ, 5-րդ, 5.1-ին և 6-րդ կետերով և 17-րդ բաժնի 12-րդ կետով.

4) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը՝ աղյուսակի 9-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով և 16.2-րդ բաժնի 1-ին և 2-րդ կետերով.

5) Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարությունը՝ աղյուսակի 16<sup>1</sup>-ին բաժնի 1-ին և 2-րդ կետերով.

6) Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը՝ աղյուսակի 16-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով.

7) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ աղյուսակի 6-րդ բաժնի 6-րդ կետով, 14-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և 17-րդ բաժնի 8-րդ կետով.

8) Արցախի Հանրապետության ոստիկանությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 8-րդ կետով.

9) Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով.

10) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն՝ աղյուսակի 12-րդ բաժնի 1-ին կետով.

11) համապատասխան լիցենզավորող մարմինները՝ աղյուսակի 17-րդ բաժնի 1-ին կետով:

2. Սահմանել, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարզ ընթացակարգով լիցենզիաները տրամադրող Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին է հանդիսանում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

3. Հաստատել պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների ձևերը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների ձևերը հաստատվում են համապատասխան լիցենզավորման կարգերով:

5. «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված լիցենզավորող մարմիններին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն լիցենզիաների տրման, գործողության երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության վերաբերյալ՝ նշելով՝

1) լիցենզավորված իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իսկ լիցենզավորված անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը.

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե սահմանված կարգով լիցենզավորման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն համապատասխան վայրում).

3) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը.

4) լիցենզիայի սերիան և համարը.

5) լիցենզիան տալու ամսաթիվը և գործողության ժամկետը:

6. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի ««Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 495-Ն որոշման

Ձև N 1



# ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը

Լիցենզիայի սերիան և համարը

Իրավաբանական անձի անվանումը

Իրավաբանական անձի գտնվելու վայրը

Գործունեության իրականացման վայրը

Տրված է

Գործողության ժամկետը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

անժամկետ

\_\_\_\_\_ ստորագրությունը

Կ.Տ.



# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը

Լիցենզիայի սերիան և համարը

Անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը

Բնակության վայրը (հասցե)

Գործունեության իրականացման վայրը

Տրված է

Գործողության ժամկետը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.

անժամկետ

ստորագրությունը

Կ.Տ.



# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը

Լիցենզիայի սերիան և համարը

Ֆիզիկական անձի անունը և ազգանունը

Բնակության վայրը (հասցե)

Գործունեության իրականացման վայրը

Տրված է

Գործողության ժամկետը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

անժամկետ

ստորագրությունը

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 սեպտեմբերի 2020թ.

N 496-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 269 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 269 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2020թ.

N 497-Ն

ք. Ստեփանակերտ

ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱՇՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ  
ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ՄՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ  
ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ  
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ  
ԱՆՎՃԱՐ ՄՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ**

Հ/Հ	Սննդամթերքի անվանումը	Սննդի նորման մեկ օրվա համար (գրամ)
1.	Հաց	550
2.	Միս, մսամթերք	90
3.	Զուկ՝ առանց գլխի	100
4.	Զավարեղեն	120
5.	Սակարոնեղեն	20
6.	Բուսական յուղ	20
7.	Շաքար, շաքարավազ	40
8.	Կենդանական յուղ՝ մարգարին	45
9.	Կաթ (կաթի փոշի)	100 (14.3)
10.	Թեյ	1
11.	Բանջարեղեն	250
12.	Կարտոֆիլ	550
13.	Աղ՝ կերակրի	8
14.	Հյութ	100
15.	Տոմատի մածուկ	3
16.	Դափնետերև	0.1
Հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին, ինչպես նաև հիվանդ անձանց որպես հատուկ սնունդ լրացուցիչ տրվում է՝		
17.	Բուսական յուղ	20
18.	Կարագ	25
19.	Կաթ (կաթի փոշի)	100 (14.3)
20.	Հավի ձու	1 հատ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2020թ.

N 498-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 15-Ի  
N 510-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 510-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում, 1-ին կետում, 8-րդ կետում, Ձև N 3-ում և Ձև N 10-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի 144-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասություններով.

«Ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին թույլատրվում է կալանավորված անձին տեսակցությունն իր պաշտպանի հետ՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Սույն կարգը տարածվում է նաև ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր իրենց մասնակցությամբ իրականացվող քրեական վարույթում ունեն մեղադրյալի կարգավիճակ:».

3) որոշմամբ հաստատված հավելվածի 150-րդ կետում «ժամերին» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ օրենքով կամ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի» կետադրական նշանը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2020թ.

N 527-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և ելնելով ռազմական դրության պայմաններում Արցախի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովության հետ կապված հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունից՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ եթե անձի հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը սահմանված էր 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, սակայն բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի աշխատանքների 2020 թվականի հուլիսի 15-ից կասեցման և Ադրբեյջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած լայնածավալ ռազմական գործողությունների պատճառով անձը բժշկասոցիալական փորձաքննության չի ենթարկվել, ապա նրա հաշմանդամության վերափորձաքննության ժամկետ է համարվում 2021 թվականի հունվարի 15-ը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կենսաթոշակները և դրամական այլ հատուցումները վճարվում են բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի՝ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը տված վարչական ակտում նշված հաշմանդամության խմբի համար հաշվարկված չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2020թ.

N 553-Ն

ք. Ստեփանակերտ

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և ելնելով ռազմական դրության պայմաններում աշխատողների վարձատրության հետ կապված հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունից՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել պետական կառավարման մարմինների, պետական կազմակերպությունների ու հիմնարկների աշխատողների՝ ռազմական դրության ժամանակահատվածում վարձատրության հետևյալ չափանիշները.

1) Արցախի Հանրապետության տարածքում գտնվող՝

ա. տվյալ ամսում աշխատած աշխատակիցներին վճարվում է աշխատավարձ՝ համաձայն հաստիքային ցուցակի: Դրանից բացի յուրաքանչյուր մարմնում ձևավորվող պարզևատրման ֆոնդից աշխատակցին վճարվում է նաև պարզևատրում՝ մարմնի ղեկավարի կողմից որոշված չափով:

Պարզևատրման ֆոնդի չափերն են տվյալ ամսում սույն ենթակետի համաձայն վճարվող աշխատավարձի ֆոնդի.

- առողջապահության համակարգում՝ 75 տոկոսը,

- ԱՀ ազգային անվտանգության ծառայությունում, ԱՀ ոստիկանությունում, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում՝ 50 տոկոսը,

- մյուս մարմիններում՝ 25 տոկոսը:

բ. տվյալ ամսում չաշխատած աշխատակիցներին վճարվում է փոխհատուցում՝ հաստիքային ցուցակով սահմանված աշխատավարձի չափով,

գ. զորահավաքային զորակոչի միջոցով կամ կամավորական հիմունքներով զինվորական ծառայության անցած, ինչպես նաև աշխարհագորայիններին վճարվում է աշխատավարձ՝ ըստ հաստիքային ցուցակի, և պարզևատրում՝ աշխատավարձի 50 տոկոսի չափով:

2) Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի ՆՀ-465-Ն հրամանագրի համաձայն Արցախի Հանրապետության տարածքից դուրս եկած՝

ա. ծառայողական պարտականությունները կատարող աշխատակիցներին փաստացի աշխատած օրերի հաշվարկով վճարվում է աշխատավարձ՝ ըստ հաստիքային ցուցակի, իսկ չաշխատած օրերի համար վճարվում է սույն կետի «բ» ենթակետում նշված փոխհատուցումը՝ չաշխատած օրերի համամասնությամբ.

բ. չաշխատած աշխատակիցներին վճարվում է 100 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում (բժշկական համակարգի աշխատողներին վճարվում է 68 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում), բացառությամբ այն աշխատակիցների, որոնց առձեռն ստացվող եկամուտը չի գերազանցում 100 000 ՀՀ դրամը: Վերջիններիս վճարվում է փոխհատուցում՝ հաստիքային ցուցակով սահմանված աշխատավարձի չափով:

3) Արցախի Հանրապետության տարածքից Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի ՆՀ-465-Ն հրամանագրի խախտմամբ դուրս եկած, ինչպես նաև առանց մարմնի ղեկավարի համաձայնության Արցախի Հանրապետության տարածքից բացակայող արական սեռի աշխատողները չեն վարձատրվում:

2. Ֆինանսավորման հայտերը Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելիս կցվում է սույն որոշման 1-ին կետով սահմանված չափանիշների համաձայն կազմված աշխատողների ցանկը:

3. Առաջարկել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին, Արցախի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին, Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահին, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահին, Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության նախագահին, Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին, Արցախի Հանրապետության հանրային հեռուստատաղիորնկերության խորհրդի նախագահին, Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Արցախի Հանրապետության մարդու իրավունքի պաշտպանին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ ղեկավարվել սույն որոշման դրույթներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից անմիջապես:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

30 հոկտեմբերի 2020թ.

N 568-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 154-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել Արցախի Հանրապետության կողմից արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ**  
**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ,**  
**ՇՐՋԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ**

**ԳԼՈՒԽ 1**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

1. Սույն կարգը սահմանում է Արցախի Հանրապետության (այսուհետ նաև՝ Թողարկող) կողմից արժեկտրոնային պարտատոմսերի (այսուհետ նաև՝ պարտատոմսեր) թողարկման, տեղաբաշխման, մարման և շրջանառության առնչությամբ առաջացող հարաբերությունները:

2. Սույն կարգի համաձայն թողարկված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի թողարկման պայմաններում փոփոխություններ չեն կարող կատարվել: Թողարկողն իրավունք ունի թողարկելու պարտատոմսեր միայն սույն կարգի համաձայն:

**ԳԼՈՒԽ 2**  
**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

3. Պարտատոմսերը թողարկվում են թողարկողի կողմից՝ Արցախի Հանրապետության անունից, անվանական, ոչ փաստաթղթային ձևով և ապահովված են Արցախի Հանրապետության՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

4. Պարտատոմսը համարվում է թողարկված «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից վարվող արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում (այսուհետև նաև՝ պարտատոմսերի հաշվառման համակարգ) տվյալ պարտատոմսի վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելուց հետո թողարկման ամսաթվին:

5. Թողարկողն ապահովում է իր կողմից թողարկված պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումը:

6. Մարման ամսաթվին պարտատոմսով ցանկացած տիպի (բացի մարումից) գործառնությունն արգելվում է:

7. Պարտատոմսերով հավաստված իրավունքների ամրագրումն իրականացվում է պարտատոմսերի հաշվառման համակարգում բացված դեպո հաշիվներում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով:

**ԳԼՈՒԽ 3**  
**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ**  
**ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

8. Պարտատոմսերը տեղաբաշխվում են Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկայում իրականացվող աճուրդի միջոցով՝ կարգավորվող շուկայի կանոններին համապատասխան: Պարտատոմսերի տեղաբաշխումը կարող է իրականացվել նաև այդ նպատակով ընտրված տեղաբաշխողի կողմից:

9. Պարտատոմսերի թողարկման չափանիշներն ու պայմանները սահմանվում են պարտատոմսերի թողարկման մասին Արցախի Հանրապետության

կառավարության համապատասխան որոշմամբ, որը պետք է սահմանի առնվազն պարտատոմսերի թողարկման ամսաթիվը, թողարկման ծավալը, մարման ամսաթիվը, արժեկտրոնի վճարման ամսաթիվը և արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը, տեղաբաշխման աճուրդի եղանակը:

10. Պարտատոմսերի արժեկտրոնները հաշվարկվում և վճարվում են կիսամյակային պարբերականությամբ:

11. Պարտատոմսերի կենտրոնացված հաշվառումը, պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից (այսուհետ՝ կենտրոնական պահառու)՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հետ կնքված պայմանագրի հիման վրա:

12. Թողարկողը պարտատոմսերի թողարկման ամսաթվից առաջ՝ ոչ ուշ, քան նախորդ աշխատանքային օրը, էլեկտրոնային եղանակով կենտրոնական պահառուին է փոխանցում պարտատոմսի սույն կարգի 9-րդ կետով նախատեսված չափանիշները՝ համակարգում գրանցելու նպատակով:

13. Կենտրոնական պահառուն սույն կարգի 12-րդ կետով սահմանված տեղեկատվության հիման վրա պարտատոմսը համակարգում գրանցելուց հետո նույն օրը էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է թողարկողին և կարգավորվող շուկայի օպերատորին պարտատոմսի գրանցման վերաբերյալ:

14. Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի կազմակերպման նպատակով դիմում է կարգավորվող շուկայի օպերատորին՝ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով: Կարգավորվող շուկայի օպերատորը իր կանոններով սահմանված կարգով տեղեկացնում է պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի մասնակիցներին տեղաբաշխման աճուրդի մասին:

15. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված որոշմամբ կարող են սահմանվել տեղաբաշխման աճուրդի մասնակիցների չափանիշներ, որի դեպքում միայն այդ չափանիշներին բավարարող մասնակիցները կարող են մասնակցել տեղաբաշխման աճուրդին:

16. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքում կարգավորվող շուկայի օպերատորն ապահովում է տեղաբաշխման աճուրդի մասին տեղեկացումը և տեղաբաշխման հարթակին մասնակցությունը միայն այդ կետով նախատեսված որոշմամբ սահմանված չափանիշներին բավարարող մասնակիցների համար:

17. Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

#### ԳԼՈՒԽ 4

#### ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

18. Արժեկտրոնային պարտատոմսերի գինը հաշվարկվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$$DP = CP + FV * \frac{C}{2} * \frac{A}{E},$$

որտեղ՝

$$CP = FV \cdot \frac{C}{2} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{2}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1 + \frac{y}{2}\right)^{N-1+\tau}} - FV \cdot \frac{C}{2} \cdot \frac{A}{E}$$

$$\tau = \frac{DSC}{E}$$

FV-ն պարտատոմսի անվանական արժեքն է,  
DP-ն պարտատոմսի ամբողջ գինն է (ներառված կուտակված տոկոսագումարը),

CP-ն պարտատոմսի մաքուր գինն է (առանց կուտակված տոկոսագումարի),

C-ն արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունն է (%),

Y-ը եկամտաբերությունն է (%),

DSC-ն գործարքի վերջնահաշվարկի ամսաթվից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվն է,

E-ն նախորդ արժեկտրոնի վճարման ամսաթվից (իսկ առաջին արժեկտրոնի դեպքում՝ թողարկման ամսաթվից) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարման ամսաթիվը (իսկ վերջին արժեկտրոնի դեպքում՝ մարման ամսաթիվը) մնացած փաստացի օրերի թիվն է համապատասխան պայմանականության դեպքում,

A-ն նախորդ արժեկտրոնի վճարման օրվանից մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը փաստացի օրերի թիվն է, իսկ առաջին արժեկտրոնի փուլում գտնվելու դեպքում՝ թողարկման ամսաթվից մինչև գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը փաստացի օրերի թիվը,

N-ն այդ պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվն է:

19. Պարտատոմսերի արժեկտրոնի հաշվարկն իրականացվում է պարզ մեթոդով, որի դեպքում հավասարվում են փաստացի և հայտարարվող արժեկտրոնների չափերը՝ համաձայն հետևյալ կանոնի՝

$$A = FV \cdot \frac{C}{2},$$

որտեղ՝

A-ն արժեկտրոնի վճարվելիք գումարն է տասը Հայաստանի Հանրապետության լումայի ճշտությամբ՝ համաձայն թվաբանական կլորացման կանոնների,

FV-ը պարտատոմսի անվանական արժեքն է,

C-ն արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունն է:

## ԳԼՈՒԽ 5

### ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Թողարկողը (կենտրոնական պահառուն, եթե այն թողարկողի հետ կնքված պայմանագրի հիման վրա իրականացնում է պարտատոմսի մարման և արժեկտրոնների վճարումը) պարտատոմսերի մարման վճարման և (կամ) արժեկտրոնի վճարման ամսաթվին՝ մինչև ժամը 12:00-ն, ապահովում է պարտատոմսի մարումն ու արժեկտրոնի վճարումը: Վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով: Կենտրոնական պահառուն սույն կետով նախատեսված գումարների վճարման փաստի մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացնում տեղեկատվություն, եթե այն թողարկողի հետ

կնքված պայմանագրի հիման վրա իրականացնում է պարտատոմսի մարման և արժեկտրոնների վճարումը:

21. Շրջանառությունում գտնվող պարտատոմսերը համարվում են մարված, եթե վճարվել են բոլոր արժեկտրոնները և պարտատոմսերի անվանական արժեքը:

22. Եթե պարտատոմսերի մարման և (կամ) արժեկտրոնի վճարման ամսաթիվը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրացուցային օրը:

23. Եթե պարտատոմսերի մարման և (կամ) արժեկտրոնի վճարման ամսաթիվը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարումը և (կամ) արժեկտրոնի վճարումն իրականացվում են հաջորդ աշխատանքային օրը:

24. Պարտատոմսը մարվում է և (կամ) արժեկտրոնը վճարվում է պարտատոմսի մարման և (կամ) արժեկտրոնի վճարման ամսաթվին նախորդող օրացուցային օրվա ժամը 24:00-ի դրությամբ կենտրոնական պահառուի մոտ հաշվառվող պարտատոմսի սեփականատիրոջը և (կամ) անվանատիրոջը: Անվանատերն ապահովում է պարտատոմսերի մարումն ու արժեկտրոնի վճարումն իր մոտ հաշվառվող սեփականատիրոջը:

25. Պարտատոմսերի առաջին արժեկտրոնի վճարման հաշվարկն իրականացվում է թողարկման ամսաթվից սկսած:

26. Պարտատոմսերի արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ պարտատոմսերի թողարկման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր վեցերորդ ամսվա համապատասխան օրը մինչև պարտատոմսի մարման ժամկետի լրանալը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

6 նոյեմբերի 2020թ.

N 586-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՄՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆԸ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏՎԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի 11 բաժնի 2 խմբի 1 դասի «04. Հատուկ նպատակների ծախսեր» ծախսային ծրագրի միջոցներից Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանմանը հատկացնել 104 550 000 (հարյուր չորս միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 486100 «Այլ ծախսեր» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՐՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՆՈՒՄԸ ԵՎ  
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ  
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին վիսամսյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ այդ թվում՝</b>	-	-	-	-
<b>06</b>			<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	-	<b>(214 000,0)</b>
	<b>3</b>		<b>Զրամատակարարում</b>	-	-	-	(214 000,0)
		1	Զրամատակարարում	-	-	-	(214 000,0)
		02	Զրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	-	-	-	(214 000,0)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	-	(214 000,0)
<b>11</b>			<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ</b>				<b>214 000,0</b>
	<b>2</b>		<b>Այլ ծախսեր</b>	-	-	-	214 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	-	44 000,0
		01	Զորակոչման և այլ միջոցառումների կազմակերպման հետ կապված ծախսեր				170 000,0
			ԱՀ պաշտպանության նախարարություն				170 000,0
		04	Հատուկ նպատակների ծախսեր	-	-	-	44 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	-	44 000,0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

30 նոյեմբերի 2020թ.

N 622-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 553-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 26-ի «Ռազմական դրության ժամանակահատվածում աշխատողների վարձատրության գործընթացի կանոնակարգման մասին» N 553-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**